

5689

Հայկական ԽՍՀ — Армянская ССР

Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎ. ԼԵՒԻՆԻ ՇՔԱՆԴԱԿԻՐ ՈՊԵՐՎԱՅԻ ՅԵԿ. ԲԱԼԵՏԻ ՊԵՏՐԱՍՐՈՎ  
Государств. ордена Ленина театр оперы и балета им. А. А. Спендиарова

+82  
0-57


Օպերա և բալետ Կ. Մ. Ա.

# ՅԵՐԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Բայես յերեք գործողությամբ, վեց պատկերով

ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ  
ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ,  
ՇՔԱՆԴԱԿԻՐ՝ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆԻ

ԿՐԵԲԵՏՏՈ ՇՔԱՆԴԱԿԻՐ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ



25 OCT 2010



Dr. Խոստաբյան

02.09.2013

3689

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Կարինե, կոլտնտեսուհի, կոմյերիտական, բրիգադիր  
Գարո քիառ, ծեր կոլտնտեսական  
Մարիամ քաջի, Գարո քիայի կինը  
Արմեն } Արանց վորդիները  
Ազատ }  
Ավետ, զվարճախոս, Արմենի ընկերը  
Սեդա } Կարինեյի ընկերուհիները  
Արմիկ }  
Վաղոն քիառ } Կոլտնտեսականներ, Գարո քիայի ընկերները  
Վազգեն քիառ }  
Աշխեն քաջի, կոլտնտեսուհի  
Սահմանապահ զորամասի պետ  
Նրա կինը  
Առաջին հրամանատար  
Նրա կինը  
Յերկրորդ հրամանատար  
Առաջին սահմանախախտիչ  
Սահմանապահներ, կոլտնտեսականներ, կոլտնտեսուհիներ,  
պիոններներ և այլն:



58338-67

## ՅԵՐԱԾԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բացատ գորակոչի կայանի մոտ

Արարատյան դաշտում զարուն եւ Կոլտնտեսականներն իրենց վորդիներին ճանապարհ են դնում կարմիր բանակի շարքերը։ Զորակոչիկների պատվին պիոներները պարում են։

Սարից իջնում են զորակոչիկ Արքան ու իր նշանածը՝ կոլտնտեսուհի Կարինեն։ Նրանց ցնծությամբ են դիմավորում։

Ֆանֆարն ազդանշան եւ տալիս, զորակոչիկները կարգով շարվում են։ Արմենի ծեր հայրը՝ կոլտնտեսական Գաբո բիձեն մի ճառով դիմում ե զորակոչիկներին։ Նա պատմում ե, թե ինչպես տանջալից եր ցարական բանակի զորակոչը։ Իր պատմությունն ուրախ կատակով վերջացնելով, Գաբո բիձեն ծերերին պարի մրցության ե կանչում։ Զուռնան նվագում ե, և ծերունիները սկսում են գանդաղ ու համաշափ պարել։ Նրանց հաջորդում են զորակոչիկները, զորոնց մեջ եւ Արմենը։

Պարից հետո յերիտասարդները ցրվում են բացատում, հրաժեշտի ժամին իրենց մասերիմների հետ լինելու համար։ Կարինեն և Արմենը նույնպես հրաժեշտ են տալիս միմյանց։

Հնչում ե զինվորական հրամանը՝ «Շարվիր»։ Մարտական քայլերգի հնչյունների տակ՝ զորակոչիկների շարանները կայտառ և աշխուժ ճանապարհ են ընկնում։ Բացատն աստիճանաբար գաղարկվում ե։ Ժայռի դուրս պրծած պրնկին մնում և միայն Կարինեն։

Գալիս են նրա ընկերուհիները։ Կարինեյին տիտոր տեսնելով, նրանք աշխատում են յերգ ու պարով ցրել նրա տիտոր թյունը։ Նրանք իրենց հետ բերում են և ուրախ կատակարան Ավետին։

Կարինեյին ուրախացնելու համար Ավետն սկսում ե իր ծաղրական պարը, բայց միայն մի քանի անհաջող փորձերից հետո յե կարողանում էր նպատակին հասնել։ Տեսարանը վերջանում ե ընդհանուր ուրախ պարով։

## ՅԵՐԿՐՈՐԴԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջին պատկեր

Խորհրդային սահմանի վրա

Ժայռոտ լեռներ: Փոթորիկ: Ժայռի յելուստի հետևում թագնված Արմենը, իր բարեկամ սահմանապահի հետ, ուշադիր կերպով ականջ են դնում գիշերվա ամեն մի ձայնին:

Յերեսում են չորս սահմանախախտիչներ: Նրանք գողեզող առաջ են շարժվում: Սնաւ նրանցից մեկը համարյա Արմենի կողքին է: Արմենը՝ շունչը պահած՝ սպասում է:

Սահմանախախտիչը ճարպիկ թուշք և գործում: Արմենը վայրկենապես թուզում, փակում է նրա սահմապարհը: Սահմանախախտիչը կրակում է: Զեռքն ուսի վերքին դրած՝ Արմենը նորից ենաբացակվում սահմանախախտիչի վրա: Սկսվում է յերկու քաջարի սահմանապահների կատաղի կրիվը չորս սահմանախախտիչների դեմ: Յերեք սահմանախախտիչները սպանվում են, բայց Արմենի ընկերն ել մահացու վերք և ստանում: Իր վերջին ուժերը լարելով, վիրավոր Արմենը շարունակում է կռվել սահմանախախտիչի դեմ: Մի խումբ սահմանապահներ ոգնության են շտապում Արմենին:

Նրանք ձերբակալում են սահմանախախտիչին, և Արմենին առաջին ոգնությունը ցույց տալով, մարտական պոստից տանում են:

Սահմանապլսին Արմենին փոխարինելու յեն գալիս ուրիշ սահմանապահներ:

Յերկրորդ պատկեր

Կոլտնետեական այգի

Խաղողի վորթերից կախված են հյութալի վոզկույզները: Բերքի ծանրությունից գետին են կռացել դեղձի ծառերը: Կեսոր է: Այգու մաշխատում են կ լոնակսականները: Նրանց շետ և

բրիգագիր կարինեն: Կանայք խաղող ու գեղձ են քաղում, տղամարդիկ լիքը կողովներն այգուց դուրս են տանում:

Հնչում է ճաշվա գագարի աղղանշանը: Կոլտնահսականները խնդությամբ բացատ են շտապում: Կանաչ խոտերի վրա գորգեր են փռում: Վուանք նստում են հանգստանալու, մյուսներն ուրախ պարում են: Գարո բիձեն վարում և շուրջպարը:

Վազելով գալիս է միշտ ուրախ Ավետը: Նրա ձեռքին նամակ կա—զա Արմենի նամակն է Կարինեյին: Կարինեն վագում է դեպի նամակը, բայց Ավետը նամակը ճարպկորեն նրանից պահելով, ասում է, վար կտա միայն այն ժամանակ, յեթե կարինեն վորեե պար կարպի: Մի քանի նազելի շարժում անելով, կարինեն խում է նամակն Ավետի ձեռքից և ուրախ հուզմունքով բաց է անում ծրարը:

Հանկարծ ժպիտն անհետան ւմ է նրա յերեսից: Նամակը կարինեյի ձեռքից վայր և ընկնում: Ընդհանուր տարակուանք: Նամակը ձեռքից՝ ձեռք և անցնում: Արմենի վիրավորվելու լուրն ամենքին տիրություն է պատճառում: Կարինեն հեռանում է և շուտով վերադառնում է զգեստափոխված: Նա հայտնում է, վոր գնում է սահմանային պահականոց:

Լուրը տիրեցնում է Գարո բիձային: Իր կըսսեր վորդի Ազատին կանչելով, Գարո բիձեն նույնպես պահականոց և գնում:

Կոլտնտեսական այգում

ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջին պատկեր

Սահմանամերձ պահականոցի բակը

Յերեկո յե: Մարտիկներից մեկը ոռւթական մի յերգ և նվագում բայան գործիքի վրա: Ընկերներն շտապ նրա շուրջն են հավաքվում: Այսոր սահմանապահները ճանապարհ են դնում իրենց մարտական ընկեր Արմենին, վորոն արձակուրդ և զնում:

Յերբ Արմենը յերեսում և պատշգամբում, խրոխտ յերգը պարերդի յե փոխվում: Աղմկալից վողջույնների տակ Արմենը հեռանում և պահականոցից:

Կովկասցի սահմանապահները «Հախտի» խաղն են սկսում: Խաղի ամենայեռուն պահին պահականոցի դարպասի մոտ հայտնվում են Գաբոր բիծեն, Կարինեն և մի խումբ ուրիշ կոլտնտեսականներ: Սահմանապահները ցնծությամբ են դիմավորում հյուրերին:

Գաբոր բիծեն և Կարինեն մարտիկների մեջ փնտրում են Արմենին: Վերջապես Կարինեն թագցրած անհանգստությամբ հարցնում են րա մասին: Կարինեյին հայտնում են, վոր Արմենն արձակուրդ և դնացել իրենց գյուղը: Կարինեն և Գաբոր բիծեն դրան չեն հավատում: Պահականոցի պետը կարգադրում ե բերել Արմենի արձակուրդի հրամանը, Համոզվելով, վոր Արմենը վողջ և առողջ է, Կարինեն ու Գաբոր բիծեն խիստ ուրախանում են. նրանք սահմանապահներին դյուղ են հրավիրում, Կարինեյի և Արմենի հարսանիքին:

Սահմանապահները ջերմորեն հանապարհ են դնում կոլտնտեսականներին:

Գիշեր և, կոլտնտեսականները Կարինեյի և Արմենի հարսանիքն են անում. Գաբոր բիծեն զվարձացնում, զբաղեցնում և հավաքվածներին:

Ներս և ընկնում Ամերը և հայտնում, վոր հյուրեր են գալիս: Ծաղկեփնջերով ներս են մտնում հրամանատարների կանայք, իսկ նրանց հետեւց գալիս ե պահականոցի պետը՝ սահմանապահների ջոկատի գլուխին անցած: Պետն Արմենին հանձնում և մի վրակե ժամացույց՝ ժողկոմի նվերը մարտական ծառայությունների համար:

Ընդհանուր ցնծություն: Պարերը հաջորդում են իրարուկայան հոպակը, հայկական թաշկինակապարը, վրացական լիդքինական, ոռւսական պարը և վերջապես սահմանապահների մարտական պարը:

Յ Ե Ր Ա Ռ Ո Ր Դ Պ Ո Ր Դ Ա Վ Ա Մ Կ Ե Ր

Ապոքեկ

Պահակ կանգնած յերկու սահմանապահները աշալուրջ հայցքով հսկում են միծ սոցիալիստական հայրենիքի սահմանները:

Սահմանապահները՝ կոլտնտեսականների հետ մեկտեղ՝ յերգ են յերգում ժողովուրդների առաջնորդի՝ միծ և իմաստուն ՍՏԱԼԻՆԻ մասին:

ՀՀ Ազգային գրադարան



NL0302542



ԳԻՒՅ 50 ԿՈՊ.

62. 85

801

1  
2

